



ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻՐԱԿԻ ԹԵՄԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետը մայիսի 8—10 օրերին, երրորդ անգամ լինելով, հովվապետական այցելություն է տալիս Ծիրակի թեմին և հավատացյալ ժողովրդին:

Ծաբաթ օրը, մայիսի 8-ին, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով մեկնում է դեպի Լենինական:

Հովվապետական այս ուղևորության ժամանակ Հայոց Հայրապետին ընկերակցում են ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի միաբան և պատրիարքարանի դիվանապետ **ու. Շահե եպս.** Աննյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **ու. Վահան եպս.** Տերյանը, գավազանակիր **ու. Գևորգ վրդ.** Սերայդարյանը, **Դավիթ սրկ.** Դիլանյանը, **Արարատ սրկ.** Գալստյանը, Մայր Աթոռի դիվանապետ **Հայկ Առաքելյանն** ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր **Արթուն Հատիտյանը:**

Երկու և կես ժամվա ճանապարհորդությունից հետո հայրապետական շքախմբի մեքենաները կանգ են առնում, Լենինականից 25 կմ հեռավորության վրա, Արթիկում, ուր Ծիրակի թեմի առաջնորդ **ու. Մաշտոց եպս.** Թաջիրյանի գլխավորությամբ քահանայից ողջ դասը, թեմական ու եկեղեցական խորհուրդների անդամներն ու հավատաց-

յալների հոծ բազմությունը նախապես ժամանել էին՝ բարի գալուստ մատթելու Հայոց Հայրապետին և հանդիսավորապես Նրան առաջնորդելու մեր հանրապետության երկրորդ մեծ քաղաքը՝ Լենինական:

Հայոց Հայրապետը իջնում է ավտոմեքենայից՝ ողջունելու և օրհնելու բարի գալուստի եկած բազմությանը:

Հայոց Հայրապետին մատուցում են հյուրասիրության աղն ու հացը:

Վեհափառ Հայրապետը օրհնում է Ծիրակի դաշտերի հացն ու աղը, կտրում հացն ու ճաշակում, ապա ողջունելով թեմակալ առաջնորդին, քահանայից դասին և ողջ հրավիրակներին, օրհնում է բոլորին:

Այնուհետև հայրապետական շքերթի մեքենաները ուղղություն են վերցնում դեպի Լենինական:

Առավոտյան տեղացած անձրևը թարմություն և գարնանային բուրմունք է տարածել մթնոլորտի մեջ, դիմացը՝ քառագագաթ ձյունապատ Արագածն է, նրա լանջերին՝ փարթամ ու թավիչ կանաչը:

Բարձր է Հայոց Հայրապետի տրամադրությունը՝ ի տես հայրենի բնության այս կախարդող համայնապատկերի և ժողովրդի ցուցաբերած որդիական սիրո և հարգանքի:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ
ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 12-ին հայրապետական շքերթի ավտոմեքենաների շարասյունը մուտք է գործում Լենինական: Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում է, հանուն Լենինականի քաղաքային խորհրդի, գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ պրն. Հովհ. Հովհաննիսյանը:

Այնուհետև Հայոց Հայրապետը ստաճնորդվում է ս. Աստվածածին եկեղեցի, որի զանգերը հնչում են տոնական ու զվարթ՝ ավետելով Հայոց Հայրապետի շնորհաբեր այցը:

Եկեղեցու շրջափակում և մայրերի վրա հավաքված լենինականցիները խանդավառությամբ, սրտագին ծափահարություններով ողջունում են Հայոց Հայրապետի ժամանումը:

Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով մուտք է գործում եկեղեցի, որը զարդարվել է տոնականորեն և լիքն է հավատավոր ու աղոթող հոծ բազմությամբ:

Եկեղեցական արարողության ավարտին տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, հանուն Լենինականի թեմական, եկեղեցական խորհուրդների և համայն հավատացյալների, բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին և խնդրում Նրա օրհնությունը:

Նորին Սրբությունը Իր գոհունակությունն է հայտնում ջերմ ու սրտագին այս դիմավորության համար, ողջունում և օրհնում է բոլոր ներկաներին և ապա ժողովրդական խանդավառ արտահայտությունների մեջ, հետիոտն առաջնորդվում է, Իր շքախմբի անդամների ուղեկցությամբ, կենտրոնական հրապարակում գտնվող «Լենինական» հյուրանոցը, ուր Նրա համար առանձնացվել էր մասնավոր հարկաբաժին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑՑԵԼՈՒՄ Է
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբի ուղեկցությամբ պաշտոնական այցելություն է տալիս Լենինականի քաղաքային խորհրդի նախագահ պրն. Ս. Մատնիշյանին:

Վեհափառ Հայրապետը ողջունելով գործկոմի պրն. նախագահին ասում է.

«Այս արևոտ օրը, զարման այս եղանակին, երրորդ անգամ է որ հովվապետական այցելությամբ կգանք Լենինական՝ Մեր օրհնությունը բերելու այս քաղաքի մեր ժողովրդին, ինչպես նաև Մեր ջերմ ողջույնը Ձեզ, պարոն քաղաքապետին, և ձեր գործա-

կիցներին՝ հաղթեալներն ձեր գործերի հաջողության համար, գործեր, որոնք նվիրված են մեր ժողովրդին և մեր վերածնունդ հաղթանակին:

Այս քաղաքը ձեր հոգածության և խնամքին հանձնված է և դուք և ձեր գործակիցները շատ մեծ գործ եք կատարած և դեռ ավելի կատարեք, որպեսզի մեր հանրապետության այս երկրորդ քաղաքը՝ ձեր սիրելի Լենինականը, դառնա իր պատմության և անվան արժանի քաղաք:

Մենք որպես Հայոց Հայրապետ շատ բարձր ենք գնահատում ձեր այս հաղթանակներ աշխատանքը, ձեզ և ձեր գործակիցներին բերում ենք Մեր օրհնությունը և մաղթում լիակատար հաջողություն, ուժ և կարողություն:

Ողջույնի Իր խոսքից հետո Վեհափառ Հայրապետը ներկայացնում է Իր շքախմբի անդամներին:

Այնուհետև բարիգալստյան պատասխան խոսքով հանդես է գալիս պրն. Սուրեն Մատնիշյանը, որը նախ հանուն Լենինականի ողջ ազգաբնակչության ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը և ներկայությունը քաղաքային խորհուրդ և հակիրճ կերպով ծանոթացնում վերջին տարիների ընթացքում Լենինականում քաղաքաշինության, մշակույթի, արդյունաբերության բնագավառներում կատարված նվաճումներին ու հաջողություններին, ինչպես նաև ապագա տարիների շինարարական հեռանկարներին:

Քաղաքային խորհրդի պրն. նախագահը առանձին ջերմությամբ է խոսում լենինականցիների մասնավոր սիրտ մասին դեպի իրենց սիրելի քաղաքը, ուր այժմ ապրում է 175 հազար հայություն:

Ապա պրն. նախագահը հրավիրում է Հայոց Հայրապետին ընդունելության գեղեցիկ և արդիական սրահը՝ հայրենի քաղաքներով ծանրաբեռն սեղանների շուրջ շարունակելու հաճելի զրույցը:

Ընդունելությանը ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը:

Խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և ասում.

«Հովվապետական այցելությունները մեծ իրադարձություններ են հանդիսացել միշտ մեր ժողովրդի կյանքում, մասնավորապես սփյուռքի մեջ:

Մեր ժողովուրդը աշխարհագրականորեն ցրված է ողջ աշխարհով մեկ և ապրում է տարբեր միջավայրերում, ենթակա բազում ազդեցությանը:

Բայց, Հայոց Հայրապետի այցելության շնորհիվ, սփյուռքի Մեր զավակները միանում են ս. Էջմիածնի օրհնության և վերածնված հայրենիքի ջերմ զգացումի մեջ, զարթնում է նրանց մեջ հայության ոգին, և նրանք խանդավառվում են հայրենիքով, երևանով ու Լեհիմականով: Մենք Մեր այցելությունների ընթացքում հաճախ ենք խոսել նաև Լեհիմականի մասին:

Կան ակտը մենք չենք կարող մոռանալ, չըհիշել աչսօր, աչստեղ:

Լեհիմականը խորհրդանշանն է մեր ժողովրդի վերածննդյան: Այստեղից է սկիզբ առել մեր ազգային-պետական վերածնունդը, խաղաղ ու ապահով ստեղծագործ կյանքի հնարավորությունը:

Այսօր մենք երկյուղ չունենք ոչ ոքից: Մենք մեր տան մեջ ենք, մեր հայրենի հողի



Պեպի Լեհիմականի ս. Աստվածածին եկեղեցի

Մեզ համար բացառիկ ուրախություն և մխիթարություն է այցելել նաև մեր հայրենի թեմերը և եղբայրական հանրապետությունների մեջ գտնվող մեր եկեղեցիներն ու ժողովրդին:

Այսօր էլ, ահա, երրորդ անգամ լինելով, հաճույքն ու մխիթարությունն ունենք գտնվելու այստեղ՝ Լեհիմականում, մեր հարազատ ժողովրդի ծոցում:

Մեր մտածումին մեջ Լեհիմականի ճակատագիրը միշտ կապված է հայ ժողովրդի ճակատագրի հետ: Բոլորս էլ գիտենք և հիշում ենք 1920 թվականը, Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որը նշանակում էր Հայաստանի վերջ, երբ ուրվագծվում էր երկրորդ եղեռնը, բնաջնջումը արևելահայության:

Նույն այս քաղաքում, սակայն, ոռու եղբայր ժողովրդի օգնությամբ, հայ ժողովուրդը պատռեց այդ սև դաշնագիրը և իր ազատ կամքով նոր կյանքի դիմեց: Այս պատմա-

վրա ապահով ու տիրական, լծված շինարար ու խաղաղ աշխատանքի, և վստահ ենք, որ երբեք և երբեք չի կարող կրկնվել Ալեքսանդրապոլի տխուր պատմությունը:

Այսօր Լեհիմականն էլ երջանիկ զարգանում, բարձրանում է ապահովության, խաղաղության և ազգային հոգևոր ու նյութական վերածննդյան ճանապարհով, եղբայր ու հարևան ժողովուրդների համերաշխ ընտանիքում և ձգտում է իրականացնել իր ազնիվ ու արդար իղձերը:

Այս զգացմունքներով ու խոհերով կկոչենք՝ կեցցե Լեհիմականը:

Մեր օրհնությունը, Մեր սրտից բխած բարեմաղթությունները Ձե՛զ, պրն. քաղաքագլուխ, և ձեր գործակիցներին, ձեր հայրենակներ աշխատանքների լիակատար հաջողության համար:

Ընդունելության ժամանակ խոսք է առնում նաև տ. Ծաֆե եպս. Աճեմյանը, սրտագին

երախտագիտությունն ու շնորհակալությունն հայտնում Հայոց Հայրապետին, հայրենի հողի վրա և հայ ժողովրդի հարազատ գավակների հետ շփվելիս իրեն ընծայած այս բացառիկ պատվի ու հայրենասիրական իրավ ասպրումների համար, որոնք երբեք չեն մոռացվելու: Սրբազանը բերում է այս առթիվ Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքի ողջույնը Լեւինական քաղաքին, պրն. նախագահին, քաղաքային խորհրդի բոլոր անդամներին և խոսում այն մասին, որ սփյուռքում ապրող ողջ հայությունը մեկ նպատակ ունի, իր վանքերով, դպրոցներով, մամուլով ու ազգային ասպրումներով, ս. Էջմիածնի օրհնության ներքո և վերածնված հայոց աշխարհի խանդավառ զգացմունքով ապրել և մնալ որպես հայ: Ս. Էջմիածինն ու մայր հայրենիքը հայ հոգու գերագույն ճշմարտություններն են, եզրակացնում է տ. Ծառե սրբազանը՝ բոլոր ներկաների ջերմ ծափերի ներքո:

Սեղանների շուրջ ստեղծվել էր հայրենասիրական, ջերմ մթնոլորտ՝ Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությամբ:

Ժիրակի թեմի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաշիրյանը, հանում իր թեմի հավատացյալ ժողովրդի, թեմական ու եկեղեցական խորհուրդների, արտագին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում նախագահ պրն. Սուրեն Մատնիշյանին և նրա գործակիցներին՝ Հայոց Հայրապետի բարձր պատվին կազմակերպված այս բացառիկ ու սրտատույ ընդունելության համար: Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում լավագույն և անմոռանալի տպավորություններով քաղաքային խորհրդի նախագահ պրն. Սուրեն Մատնիշյանից և բոլոր ներկաներից:

ԿԻՐԱԿԱՍՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈՋ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎԵԼԵՑՈՒՄ

Ծաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է ս. Աստվածածին եկեղեցին և նախագահում կիրակամտի ժամերգությանը:

Եկեղեցական արարողության ավարտին հայրապետական շքախմբի անդամ տ. Ծառե եպս. Աճեմյանը քարոզում է «Գթա, Տէր, ի վերայ Սիոնի, և շինեսցին պարիսպն Երուսաղեմի» բնաբանով:

Տ. Ծառե եպիսկոպոսը իր քարոզի սկզբում նախ հաղորդում է Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի և ս. Հակոբյանց միաբանության ողջույնը և ապա իր որդիական երախտագիտությունն ու շնորհակալությունը, որ իրեն պատիվ է վիճակված լինե-

լու հայրապետական այս ողևորության ժամանակ Հայոց Հայրապետի ջրախմբի անդամ, և հոգեկան մեծ բավականությամբ վազանք օրվա հանդիսությանց հոգևոր և հայրենասիրական բերկրանքը:

Այնուհետև քարոզիչ սրբազանը խանդավառորեն խոսում է հայ ժողովրդի կառուցվառքին խոսում է հայ ժողովրդի մասին, մանավանդ մեր դական շնորհների մասին, մանավանդ մեր պատմության վերջին 50 տարիներին, երբ համարյա ոչնչից մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքի շնորհիվ ստեղծվեց մեր արդի փառավոր հայրենիքը:

Ծառե սրբազանը խոսում է նաև Երուսաղեմի հոգևոր, կրթական և շինարարական ծավալուն գործունեության մասին:

Տ. Ծառե սրբազանը իր քարոզի վերջում վեր է հանում Հայոց Հայրապետի գահակալության օրերին Մայր Աթոռում կատարված եկեղեցաշեն գործունեությունը և բարեմաղթում, որ ըստ սաղմոսեղծուի միշտ կանգուն և անխորտակ մնան վերածնված հայոց աշխարհի և ս. Էջմիածնի «պարիսպները»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏՐԱՐԳ ԵՎ ՔԱՐՈՋ

Կիրակի, մայիսի 9. «Տօն երևման ս. Խաչի»:

Պայծառ, զարնանային առավոտ է բացվել Լեւինականի վրա:

Մայիսի 9:

Այսօր նաև հաղթանակի տոն է:

Լեւինականը զարդարվել է տոնականորեն: Ամեն կողմ հպարտ ծածանվում են հաղթության դրոշմերը:

Մեր ժողովուրդը ազգային հպարտության արդար զգացմունքով տոնում է իր արյունով և կյանքով գնված հաղթանակի օրը:

Հաղթանակի տոնի բերկրանքն ու ուրախությունը կրկնապատկվում է Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությամբ:

Ժամը 11-ին հնչում են ս. Աստվածածին եկեղեցու զանգերը: Վեհափառ Հայրապետը հյուրանոցից հեծիտուն, ժողովրդական հոծ բազմությամբ շրջապատված ու խանդավառ արտահայտությունների մեջ, առաջնորդվում է ս. Աստվածածին եկեղեցին՝ մատուցելու օրվա հանդիսավոր ս. պատարագը:

Եկեղեցին, շրջափակը, փողոցներն ու մայրերը լցված են բազմահագար խոունեւորած բազմությամբ:

Եկեղեցու ավանդատանը զգեստավորված պատարագիչ Հայոց Հայրապետը խնկով ու շարականով, աղոթքով ու եկեղեցական թափոթով առաջնորդվում է և բարձրանում Ավագ խորան:

Ս. Սեղանին սպասարկում են տ. Ծառե և տ. Վահան եպիսկոպոսները, տ. Գևորգ

վարդապետը, քահանայից և սարկավագաց դասը:

Վերնատան մեջ եկեղեցու երգեցիկ խումբը, տ. Արամ քնն. Բոյաջյանի ղեկավարությամբ, կատարում է ս. պատարագի եկամյալան երգեցողությունը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Փառք հրաշափառ Յարութեան Բո, Տէր» բնաբանով:

րությունը, աշխատանքային եռանդն ու տաղանդը և նախաձեռնությունը իրենց հայրենի քաղաքի հոգևոր ու ազգային ավանդությունների պահպանման, նաև ջերմ բարեմաղթություններ է անում Լեհիսկան քաղաքի իշխանությանը և բնակչությանը:

Հավարտ ս. պատարագի հավատացյալներից շատերը սուրբ հաղորդություն են



Աղոթքի պահ Լեհիսկանի ս. Աստվածածին եկեղեցում

Հայրապետական Իր քարոզում Ն. Սըրբությունը Քրիստոսի հարության ավետիսով ողջունում է եկեղեցում հավաքված հավատացյալների հոծ բազմությանը, շեշտում, որ հայ ժողովուրդը առաջիններից մեկը եղավ Քրիստոսի հարության հավատացողներից, և մեր պատմությունը անցյալում դարեր շարունակ մահվան վրա տարված կյանքի և վերածննդյան հաղթանակն է հանդիսացել:

Քրիստոսի հարության խորհրդով Նորին Սրբությունը վեր է հանում հայ ժողովրդի հոգևոր-մշակութային և հայրենասիրական վերածնունդը մե՛ր օրերին, հայրենի հողի վրա: Ապա Վեհափառ Հայրապետը ոգեկոչում է 9 մայիսի փառապանծ հիշատակը, խորհրդանիշը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի՝ ընդդեմ չարի և խավարի ուժերի:

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետը դրվատում է լեհիսկանցիների հայրենասի-

ստանում պատարագիչ Հայոց Հայրապետի ձեռքով:


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15-ին Ծիրակի թեմի առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, թեմական ու եկեղեցական խորհուրդները Հայոց Հայրապետի պատվին կազմակերպում են պաշտոնական ընդունելություն «Անի» ճաշարանի հայկական ոճով գեղեցիկ սրահում:

Որոշյալ պահին ժամանում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված Իր շքախմբի անդամներով, և օրհնում սեղանը:

Պատվո սեղանի շուրջ Հայոց Հայրապետի կողքին տեղ են գրավել տ. Մաշտոց, տ. Ծահե, տ. Վահան եպիսկոպոսները:

Ծաշկերույթին ներկա են նաև քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Հովհ. Հովհաննիսյանը և քաղխորհրդի մյուս ներկայացուցիչները:



Ծիրակի թեմակալ առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը Հայոց Հայրապետի ներկայությամբ ողջունում է հետևյալ ջերմ ուղերձով.

«Ընդհանրապես Հայրապետ.

Հոգեկան զգացումներ կան, որոնք կարելի չէ բառերով արտահայտել:

Երեկ առավոտ Լեւոնականի ճանապարհի վրա հուզումնալից վայրկյաններ ապրեցինք, երբ Ձեր շնորհաբեր ժամանումը ողջունում և մատուցվում էին երկրի աղն ու հացը, իբր ճշմարիտ հավատարմության և երախտագիտության նշան:

Այսօր հաղթանակի օր է, հաղթանակը ապահովողը խաղաղությունն է. «Յերկիր խաղաղություն, ի մարդիկ հաճութիւն»:

Մեծ մարդիկ անձնավորյալ արտահայտություն են իրենց ժողովուրդի և ժամանակի ոգուն: Վեհափառ Հայրապետը այդ մեծերից մին է, ու ծնունդն է իր հարազատ ժողովուրդին:

Հայոց Հայրապետությունը մարմին առավ հայ ժողովուրդի ծոցից: Ան դարեր ամբողջ կատարեց Միաձուլեցով սահմանված պարտավորությունը հանդէպ իր ժողովուրդին: Դարեր ամբողջ ս. Էջմիածինը եղավ հավատքի ամրոցը: 1600 տարիներ մա եղավ իր ժողովուրդի արտահայտությունն ու արտահայտիչը: Ահա թե ինչու «Եթե հայը հավատալուց էլ դադարի, յուր եկեղեցու հավատացյալը լինելուց չի դադարեր», ինչպես ասել է մի օտար հեղինակ, մեզանից վաթսուն և ավելի տարիներ առաջ:

Աստվածաբայալ Հայրապետ, թույլ տվեք Ծիրակի թեմի ամբողջ հայության ու մեր անունից մաղթել Ձեզ երկար և արևոտ օրեր, որպեսզի Ձերոյ Սրբության հաջողվի ավելի փառավոր էջեր արձանագրել Հայոց Հայրապետության դարավոր պատմության մեջ:

Իսկ մենք, Ձերոյ Ս. Օծության հովանու ներքո, խաղաղ աշխատանքով ու պատվով ծառայենք եկեղեցուն, մեր հայրենիքին:

Ձեր թանկագին կենացը, մեր մեծ Քահանայապետ»:

Ընդունելության ժամանակ խանդավառ մթնոլորտում արտահանվում են հայրենասիրական ջերմ ելույթներ: Վեհափառ Հայրապետը շեշտում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հայրենամարտի ու խաղաղասիրական գործունեությունը՝ որպես իր կյանքի արագան նպատակը: Տ. Ծախե եպիսկոպոսը խոսում է Հայոց Հայրապետի

արտահանման կատարած հովվապետական արագեությունների հոգևոր, ազգային ու հայացեությունների մեծ նշանակության մասին՝ թեմասիրական մեծ նշանակության մասին՝ շեշտելով, որ Նորին Սրբությունը ներկա է սկիզբի յուրաքանչյուր ճշմարտապես հայ մարդու արտում, որպես Հայաստանի Աղավնի, Խոսնակն ու Չայը: Հայոց Հայրապետի հանդեպ մեր ունեցած մեծ սիրուն ու պաշտամունքին մեջ, ասում է սրբազանը, մենք արտահայտում ենք մեր հայրենասիրությունը ու մեր հավատարմությունը վերածնված մեր ժողովրդի հանդեպ:

Գործկոմի նախագահի տեղակալ պրն. Հովհաննես Հովհաննիսյանը, հանուն Լեւոնական քաղաքի, նրա ղեկավար մարմինների և ազգաբնակչության մի անգամ ևս ողջունելով ներկայությունը Հայոց Հայրապետի, Նրան մաղթում է քաջառողջություն և հաջողություններ՝ հետագա տարիների հայրենամարտ գործունեության ճանապարհի վրա, որպես մեր ժամանակի հայ եկեղեցու մեծագույն Հայրապետը:

Ընդունելության ժամանակ հայրենաշունչ ու խանդավառ ճառ է ասում նաև «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ս. Հատիսյանը:

Ընդունելության խանդավառությունը կրկնապատկում է Արարատ սարկավազը՝ հայկական մի քանի երգերի կատարումով:

Պաշտոնական տույն ընդունելությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության և գնահատության խոսքով:

Նորին Սրբությունը հայրապետական Իր բարձր ուշադրությանն է արժանացնում Լեւոնականում կատարված եկեղեցամարտի ծառայությունը թեմակալ առաջնորդի, թեմական ու եկեղեցական խորհուրդների և քահանայից դասի:

Լեւոնականի ս. Աստվածածին եկեղեցում պաշտոնավարում են տ. Նորայր քհն. Սարգսյանը, տ. Արամ քհն. Բոյաջյանը, տ. Կարապետ քհն. Քելամյանը, տ. Հայկազուն քհն. Գյունջյանը և տ. Սուրեն քհն. Ծատուրյանը:

*
*
*

Երեկոյան ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Լեւոնականի թեմական, եկեղեցական խորհուրդների անդամների և քահանայից դասի ու հանգամանորեն հետաքրքրվում Լեւոնականի եկեղեցական-հոգևոր կյանքով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Մայիսի 10-ին, երկուշաբթի օրը, ժամը 10-ին, Լեւոնականի ս. Աստվածածին եկե-

ղեցում Իր աղոթքն անելուց հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Լե-

միևնականից ու ինքնաշարժերով հովվապետական այցելության մեկնում Կիրովական:

Հայոց Հայրապետին ճանապարհում է քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Հովհաննես Հովհաննիսյանը:

Ժամը 12.30-ին հայրապետական շքախմբի մեքենաները կանգ են առնում Կիրովականի «Գուգարք» հյուրանոցի առաջ:

ԱՅՑ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Կիրովականի քաղաքային խորհուրդ՝ ընկերակցությամբ տ. Սաշտոց, տ. Վահան եպիսկոպոսների և Իր շքախմբի մյուս անդամների:

Քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Վ. Ավետիսյանը սրտագին խոսքով ողջունում է Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին:

Այնուհետև պրն. Ավետիսյանը մասնավոր ու ջերմ սիրով Հայոց Հայրապետին ծանոթացնում է Կիրովականում վերջին 6—7 տարիների ընթացքում կատարված մշակութային, շինարարական աշխատանքների հետ:

Այժմ Կիրովականն ունի 115 հազար բնակչություն: Քաղաքի ազգաբնակչությունը 1959 թվականից ի վեր աճել է 50 տոկոսով, ինչ որ բացառիկ երևույթ է: Կիրովականում ապրում են մեծ թվով ներգաղթողներ: Կիրովականում աչքի է ընկնում քաղաքաշինության բարձր մակարդակը: Քաղաքը աճում է հզոր թափով: Ամեն տարի շուրջ 1700 ընտանիքներ ստանում են նոր բնակարան: Վերջին տարիներին Կիրովականում բացվել է մանկավարժական ինստիտուտ, վեց ֆակուլտետներով, պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ: Քաղաքը ունի մշակույթի պալատ, մեծ ու ճոխ հանրախանութներ:

Կիրովականը որպես Հայաստանի արդյունաբերական մեծ կենտրոններից մեկը, իր արտադրանքը արտահանում է ավելի քան 70 արտասահմանյան երկրներ:

Ապա պրն. տեղակալը ասում է, որ քաղաքաշինության մեջ, նկատի ունենալով մեր քաղաքի նյութական հնարավորությունները, տարածվելու փոխարեն բարձրանում ենք: Կիրովականում այժմ կառուցվում են 8—10 հարկանի շենքեր, որոնք գեղեցկացնում են քաղաքն ու նրան հաղորդում ժամանակակից քաղաքի տեսք և հրապույր:

Պրն. Վ. Ավետիսյանը մասնավոր կարևորությամբ անդրադառնում է Հայոց Հայրապետի հայրենամիլեր գործունեությանը, շատ բարձր գնահատելով սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման և մանավանդ հայահափայլմանը նվիրված աշխատանքներում Նորին Սրբության կատարած շնորհակալ վաստակը:

Ողջույնի իր խոսքերից հետո պրն. Վ. Ավետիսյանը Հայոց Հայրապետին է ներկայացնում քաղաքային խորհրդի այլ բաժանմունքների պատասխանատու վարիչներին:

Հայոց Հայրապետը Իր պատասխան ողջույնի խոսքում ասում է, որ շատ հաճելի է իրեն համար, երկրորդ անգամ լինելով, գալ այստեղ և բերել Իր սրտի բարի մաղթանքները Հայաստանի գեղեցիկ մի անկյունը հանդիսացող Կիրովական քաղաքին և նրա բնակչությանը:

Նորին Սրբությունը մեծ գոհունակությամբ նշում է Կիրովականում կատարվող հայրենաշինության և քաղաքաշինության աշխատանքները, մեր հայրենի կառավարության հովանու ներքո, անմիջական ղեկավարությամբ քաղաքային խորհրդի, որպեսզի է՛լ ավելի աճի ու գեղեցկանա Կիրովականը, դառնա մեր վերածնված հայրենիքի պատվական քաղաքներից մեկը:

Հաճախ, նշում է Իր ողջույնի խոսքի մեջ Հայոց Հայրապետը, արտասահմանում կատարած Իր ուղևորությունների ժամանակ Ինքը մեծ սիրով խոսել է հայկական ոճով ու գունագեղությամբ զարգացող ու գեղեցկացող այս քաղաքի մասին, նրա գործարանների և արդյունաբերական այլ կարևոր հիմնարկների մասին, որոնք իրենց օրինակելի աշխատանքով, մասնագիտական անձնակազմով և բարձրորակ արտադրողականությամբ պատիվ են բերում մեր հայրենիքին:

Հայոց Հայրապետի գործունեության հիմնական նպատակներից մեկն է նաև, հաստատում է Նորին Սրբությունը, մեր հայրենիքի շինության և հառաջդիմության գործը:

Հայոց Հայրապետը Իր ողջույնի և օրհնության խոսքն ավարտում է քաղաքային խորհրդի ղեկավարության և անձնակազմի հայրենամիլեր ապագա աշխատանքների հաջողության և Կիրովական քաղաքի ու նրա բնակչության բարօրության մաղթանքներով:

Այնուհետև տեղի է ունենում ջերմ, հայրենասիրական զրույց:

Ընդունելությանը ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գապարյանը:



Հայրապետական ա. պատարագ Լենինականի ա. Աստվածածին եկեղեցում

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԺԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ժամը 14-ին Կիրովականի քաղաքային խորհուրդը Հայոց Հայրապետի բարձր պատվին ճաշկերույթ է կազմակերպում «Կիրովական» գեղաշեն ճաշարանում:

Ընդունելությանը ներկա են հայրապետական շքախմբի անդամները:

Քաղաքային խորհրդի կողմից ընդունելությանը մասնակցում են քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահի առաջին տեղակալ պրն. Վլադիմիր Ավետիսյանը և գործկոմի բաժնիների պատասխանատու վարիչներ:

Հայրենի բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվում է ճշմարտապես հայրենասիրական ջերմ մթնոլորտ:

Պրն. Վ. Ավետիսյանը մի անգամ ևս հանուն Կիրովականի քաղաքային իշխանությանց սրտագին ողջունում է Հայոց Հայրապետի ներկայությունը պատմական Գուգարաց աշխարհում և երկար կյանք բարեմաղթում Նորին Սրբությանը:

Հայոց Հայրապետը Իր զգացված շնորհակալությունը հայտնելով ջերմ ու սրտագին այս խոսքերի և ընդունելության համար, նշում է, որ Իրեն համար մեծ ուրախություն

է և հոգեկան բերկրանք՝ լինել Կիրովականում, քաղաքային խորհրդի հյուրընկալ հարկի տակ ու բաժանել այստեղ, սեղանի վրա հայ ժողովրդի ավանդական հյուրասիրության աղն ու հացը:

Այնուհետև Նորին Սրբությունը նշում է, որ 50 տարիներ առաջ տխուր էր ճակատագիրը մեր հայրենիքի և ժողովրդի: Բայց Նախախնամության օգնությամբ, ուսումնական ժողովրդի եղբայրական օգնությամբ և մեր ժողովրդի հերոսական ճիգերով փոխվեց իրադրությունը, հայ ժողովուրդը կարողացավ ստեղծել իր ազգային պետականությունը և արևի տակ իրեն համար նվաճել՝ ազատ ապրելու և ստեղծագործելու արդար իրավունք:

Մենք էլ, նշում է Հայոց Հայրապետը, մեր համեստ ուժերով աշխատում ենք մեր ժողովրդի և մեր հայրենիքի առաջընթացի համար: Ս. Էջմիածինը եղել է հայրենասիրության օջախ: Մենք, շեշտում է Նորին Սրբությունը, շարունակում ենք վառ պահել մեր նախնյաց հավատքի և հայրենասիրության ոգին ու ընթանալ նրանց ճանապարհով: Հայրենասիրական այդ ծառայությունը մեր էության հետ է կապված, և Մենք մեր պարտքն ենք կատարում մեր ժողովրդի և վերածնված հայրենիքի հանդեպ:

Իր եղությի վերջում Հայոց Հայրապետը բաժակ է առաջարկում հայոց վերածնված ու հավերժական Հայաստանի, հայրենի բարեխնամ կառավարության և ընդունելության այս սեղանի ներկա հայրենակներ ղեկավարների կենաց:

Սեղանների շուրջ ժամերն անցնում են արագ, բայց հաճելի ու բովանդակալից:

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում պրն. Վ. Ավետիսյանից և ընդունելությանը ներկա բոլոր ղեկավար անձնավորություններից և վերադառնում հյուրանոց՝ յավագույն տպավորություններով:

ՎԵՀԱԾԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎԵՂԵՑՈՒՄ

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Կիրովականի հայոց ս. Աստվածածին եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Եկեղեցու շրջափակում և ներսում հավաքված հավատացյալների հոծ բազմությունը խանդավառորեն և բարեպաշտ երկյուղածությամբ ողջունում է Հայոց Հայրապետի օրհնաբեր ժամանումը:

Ն. Ս. Օծությունը նախագահում է երեկոյան ժամերգությանը:

Եկեղեցական արարողության ավարտին ս. Մաշտոց եպս. Թադևրյանը բարի գա-

լուստ է մաղթում Հայոց Հայրապետին և խնդրում Նրա օրհնությունը:

Նորին Սրբությունը հայրաբար ողջունում է Իր հոգևոր զավակներին, բաշխում նրանց Իր օրհնությունը և խոսում Կիրովականի համայնքին տրված հովվապետական երկրորդ այցելության հոգևոր ու հայրենասիրական նշանակության մասին՝ տալով Իր պատգամը, հավատարիմ մնալու մեր հոգևոր արժեքներին, քրիստոնեական բարոյական պատգամներին ու ապրելու ս. Էջմիածնի օրհնության ներքո, որպես հավատարիմ ու երջանիկ քաղաքացիները մեր վերածնված հայրենիքի ու Կիրովականի:

Կիրովականի ս. Աստվածածին եկեղեցում պաշտոնավարում են տ. Վազգեն քհն. Դավակյոզյանը և տ. Սուրեն քհն. Մոսկովյանը:

Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Կիրովականից՝ վերադառնալու համար Մայր Աթոռ Շիրակի թեմին տրված եռօրյա հովվապետական այցելությունից հետո:

Դեպի Մայր Աթոռ Հայոց Հայրապետին ճանապարհում է, հանում Կիրովականի քաղաքային խորհրդի, քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ պրն. Վ. Ավետիսյանը:

Ժամը 21-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ժամանում է Մայր Աթոռ:

